Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2023թ. մայիսի 8-10-ը Ռուսաստանի Դաշնություն (Արխանգելսկ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Արարատ Գրիգորյան,

Արմեն Դավթյան,

Վասիլ Ասլանյան,

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետ,

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի խորհրդական

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ։

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն (Արխանգելսկ), մայիսի 8-10-ը։

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնության Արխանգելսկի մարզի նահանգապետ Ալեքսանդր Ցիբուլսկի։

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ՀՀ Վայոց ձորի մարզի պատվիրակության այցը պայմանավորված էր ՌԴ Արխանգելսկի նահանգապետ Ալեքսանդր Ցիբուլսկիի հրավերով՝ երկու մարզերի միջև համագործակցության շրջանակներում Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրվան նվիրված միջոցառմանը մասնակցելու նպատակով։

Այցը կարևորվում էր նաև Ջերմուկ և Արխանգելսկ քաղաքների միջև համագործակցության համաձայնագրի իրականացման գործողությունների ծրագրի ստորագրման տեսանկյունից, որը կնքվեց 2023-2024 թվականների համար՝ կողմերի առջև

նախանշելով համագործակցության ամրապնդմանն ուղղված քայլերը և նախաձեռնությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2022-2027թթ. միջտարածաշրջանային համագործակցության ծրագրի իրականացման գործողությունների ծրագրով և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և ՌԴ Արխանգելսկի մարզի կառավարության միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին համաձայնագրի իրականացման գործողությունների ծրագրով (2022-2024 թվականների համար) նախատեսված պայմանավորվածությունների կատարման նպատակով տարին մեկ անգամ փոխայցելությունների կազմակերպման պահանջով:

6. Քննարկված թեմաները՝

Այցի ընթացքում քննարկվել են երկու գործընկեր մարզերի միջև համագործակցության զարգացման, ընդլայնման և նոր ուղիների մշակման հնարավորությունները: Ներկայացվել են Վայոց ձորի մարզի տնտեսության կարևորագույն ուղղությունները, արտահանման ներուժ ունեցող արտադրանքները, ինչպես նաև մարզի՝ ներկրման համար անհրաժեշտ առաջնահերթությունները: Հանդիպման ընթացքում խոսվեց վայոցձորյան և հայկական արտադրանքի՝ Արխանգելսկի մարզ արտահանելու հնարավորությունների, գոյություն ունեցող ծավալների ընդլայնաման, և բեռնափոխադրման կազմակերպման հետ կապված հարցերի վերաբերյալ:

Քննարկվել են Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի և Արխանգելսկի մարզի կառավարության համապատասխան ստորաբաժանումների փոխգործակցության ակտիվացման և համագործակցության տարբեր ուղղությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման առավել արդյունավետ իրականացման, ինչպես նաև երկու մարզերի միջև գործարար կապերի ընդլայնման հետ կապված հարցեր:

Մասնավորապես քննարկվել է առողջապահության և կրթության ոլորտում համագործակցությունը: Առողջապահության ոլորտում հեռանկարային ուղղություն է դիտարկվել երկու մարզերում պահանջարկ ունեցող բժիշկ-մասնագետների փոխանակումը, ինչպես նաև առողջարանային բուժումը, որը կարող է կենտրոնանալ ինչպես հենաշարժական համակարգի խանգարումներ ունեցող երեխաների, այնպես էլ տարեցների վրա:

Կողմերը քննարկել են նաև համագործակցության հեռանկարները երիտասարդական քաղաքականության ոլորտում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Մայիսի 10-ին Արխանգելսկի մարզի նահանգապետ Ալեքսանդր Ցիբուլսկիի հետ տեղի ունեցած հանդիպման շրջանակներում մտքեր են փոխանակել երկկողմ օրակարգի հարցերի շուրջ՝ անդրադառնալով մարզերի միջև համագործակցության ուղղությունների ընդլայնման հնարավորություններին, մասնավորապես՝ ապրանքաշրջանառության ծավալների մեծացման, զբոսաշրջության, գիտատեխնիկական և հումանիտար ոլորտներում փորձի փոխանակման ուղղություններին: Խոսելով համագործակցության ընդլայնման մասին, մարզպետ Արարատ Գրիգորյանը կարևորել է տարբեր ոլորտներում միջոցառումների կազմակերպման, փորձի փոխանակման և միասնական մոտեցման ստեղծման անհրաժեշտությունը:

Այցի շրջանակներում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության Արխանգելսկի շրջանային բաժանմունքի ներկայացուցիչների հետ՝ նախագահ Մամիկոն Գեկչյանի գլխավորությամբ: Քննարկվել են ապրանքաշրջանառության հետ կապված հարցեր և խնդիրներ, ինչպես նաև բարձրաձայնվել է դեպի Հայաստան ուղիղ չվերթների իրականացման անհրաժեշտության հարցը:

Արխանգելսկի տարածաշրջանային առևտրաարդյունաբերական պալատում կայացած հանդիպումը նվիրված էր համագործակցության հեռանկարային ոլորտների քննարկմանը: Քննարկվեցին առողջարանային բուժման և հանգստի հնարավորությունների, ինչպես նաև տարածաշրջանի ագրոարդյունաբերական և փայտանյութի ձեռնարկությունների ռեսուրսների իրացման վերաբերյալ հարցեր: Կողմերն առավել շահագրգռված էին միջազգային զբոսաշրջության, ինչպես նաև գիտաարդյունաբերական համագործակցության զարգացմամբ:

Արախանգելսկի մարզային երիտասարդական կենտրոնում պատվիրակությունը ներկա է գտնվել «Ջերմուկ. մարդիկ և քաղաք» ֆոտոցուցահանդեսի բացման արարողությանը, որը բացելու գաղափարը ստեղծվել է Ջերմուկի և Արխանգելսկի երիտասարդների համագործակցության արդյունքում և նպատակ է հետապնդում տեղի երիտասարդներին և այցելուներին ծանոթացնել Ջերմուկ քաղաքի հետ:

Կրթության ոլորտում համագործակցության ընդլայնման շրջանակներում առաջարկվել է մշակել համատեղ նախագծեր, ներառյալ համատեղ երիտասարդական ճամբարների կազմակերպում, որը կնպաստի ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այցի շրջանակներում տեղի ունեցավ Ջերմուկ և Արխանգելսկ քաղաքների միջև համագործակցության համաձայնագրի իրականացման գործողությունների ծրագրի ստորագրման արարողությունը, որով կողմերը նախանշեցին 2023-2024թթ ընթացքում աշխատանքների առաջնահերթությունները և նախատեսվող քայլերը։

Կողմերի միջև նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ հայկական կողմի հրավերով Արխանգելսկ մարզի նահանգապետի գլխավորած պատվիրակությունը հոկտեմբեր ամսին կայցելի Վայոց ձորի մարզ՝ մասնակցելու Արենի գինու փառատոնին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպումների արդյունքում ռուսական կողմը առաջարկել է ստեղծել աշխատանքային խումբ՝ հանդիպման ընթացքում քննարկված խնդիրները, հարցերը և առաջարկները հասցեագրելու և հետագա համագործակցության միջոցով պայմանագրային դաշտ բերելու նպատակով:

Առաջարկվել է նաև Ջերմուկի հյուրանոցների սեփականատերերի հետ քննարկել և մշակել Արխանգելսկի մարզի զբոսաշրջիկների համար նախատեսված փաթեթներ, ինչպես նաև մարզի գործարարների շրջանում իրականացնել քննարկումներ՝ փոխշահավետ ապրանքաշրջնառություն իրականացնելու ուղղությամբ։

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

15.05.2023